



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԸ ԵՎ ԱՆԳՆՈՒՇԻԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՀԱՅ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

Հրապարակագիր Պ. Ն. Ամատունի, որ վերջին րա Փարիզ հաստատված է, Լոնտոնեն իր անգլուհի կնոջմեն ստացած է հետևյալ նամակը, որու քարզմանությունը հրատարակված է Փարիզի «Ժողովուրդ» թերթին մեջ:

Սիրելիս,

Մեծ և անհուն ուրախությամբ տեղեկացա, որ մեր սիրելի խաչիկը Ա կարավանով (Պեյրոնին, հուլիս 4, 1947—«Ժ.») Հայաստան հասած է և արդեն հայրենի հողը կհերկի թրաքթորով: Հուզումով քննեցի Սովետ Հայաստանի քարտեզը և կարծեցի տեսնել հրաշալիքի ծիրանի գոտի մը, որուն մեկ ծայրը հավիտենական Արարատի վրա կանգնող Նոյի տապանին, իսկ մյուս ծայրը կիջներ մեր խաչիկի թրաքթորին վրա... ու խաչիկը ուրախ և բարձրաձայն կերգեր իր հզոր ձայնով:

Ու մենք հոս այս պառավացած երկրներու ամուլ կյանքին մեջ կտապլտկինք, հեռու իրարմ հաճախ, որպեսզի կարենանք հարուստի ձեռքեն խլել մեր պատառը:

Հաճախ խորհած եմ առանձնության ժամերուն և բնականաբար, ես քեզմե ավելի ժամանակ ունեմ մտածելու մեր այսօրվա և ապագա կյանքի մասին: Դուն հաճախ կըսես, որ քիչ ժամանակեն կյանքի այս դժվարին խնդիրները լավ կերպով պիտի կարգադրվին, բայց ես կկասկածիմ գոնե հառաջիկա շատ մը տարիներու համար: Այս պատերազմեն հրկու տարի առաջ հազիվ սկսած էինք 1914—1918-ի ավերները մոռնալ, երբ ահա եկավ այս, որ ավելի վատ հետևանք ունեցավ և չեմ

հուսար որ 25—50 տարիներ պիտի բավեն կանոնավորելու այս երկրները:

Սիրելիս, չենք փափաքիր որ զավակներ մեծցնենք տառապանքի համար, ինչ որ մեր սերունդին բաժինը եղած է մինչև այսօր. եկուր զիրենք տանինք մաքուր և բարի ճամբու մեջ և տանք իրենց ապագա կարիքներու իղեալը:

Ուստի կհավատամ և կթելադրեմ, որ ներգաղթի ամենն առողջ որոշումն է: Մեր Հայրենիք՝ Սովետ Հայաստան պիտի ողջունե քեզի պես մեկու մը վերադարձը, ոչ թե քու ուզած աշխատանքդ միայն պիտի կատարես, հապա երևակայե, սիրելիս, որ մեր ամբողջ կորովը և ճիգը պիտի վայելեն հառաջդիմական վարձատրությունը: Ես ալ կփափաքիմ մի քիչ օգտակար գործ կատարել և կարող եմ, բայց ոչ հոս: Այս երկիրը չէ կազմակերպված այնպիսի ձևով, որ մեզի նման հառաջդիմասեր անձինք կարենան օգտակար ըլլալ:

Ու տակավին կա ընտանեկան անուշ կյանք, որուն կբաղձանք և միայն կրնանք ունենալ երկրի մը մեջ, ուր մարդկային կյանքը կազմակերպված է մտային և հոգեկան արժեքներու, բազուկի և զոհողության ոգիի գրեհ հատման չափանիշով:

(«Լրաբեր» թիվ 42)

